Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության. վարչական տույժ նշանակելու մասին 30.06.2021թ. թիվ 2112943732 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<17>> 08 2021թ. 7-13- 12438 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Գարեգին Հովհաննիսյանի ՄԴ/66242-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի 1-ին թաղամասի 35 շենքի 1 բնակարանի բնակիչ Գարեգին Հովհաննիսյանը դիմումով խնդրել է անվավեր ճանաչել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 30.06.2021թ. թիվ 2112943732 որոշումը՝ նշելով, որ կանգառ է կատարել 58 վայրկյան տևողությամբ և իրավախախտումն ունի նվազ նշանակություն:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 30.06.2021թ. թիվ 2112943732 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 80-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցը տեղակայել թույլատրվում է երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով՝ բացառությամբ այն տեղերի (երթևեկելի մասի տեղային լայնացում), որտեղ գծանշմամբ թույլատրված են տրանսպորտային միջոցների դասավորման այլ ձևեր: Առանց կողային կցորդի երկանիվ տրանսպորտային միջոցները թույլատրվում է կանգնեցնել երկու շարքով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, **երբ կանգառը կատարվել է միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով**, չի գերազանցել

մեկ որպե ժամանակահատվածը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 30.06.2021թ. թիվ 2112943732 որոշման հիմքում դրված տեսանյութի դանդաղեցված և դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ դիմումատուի կողմից շահագործվող տրանսպորտային միջոցը 10.06.2021թ. ժամը՝ 17:20:08-րդ վայրկյանից ժամը՝ 17:21:28-րդ վայրկյանը ներառյալ, որի տևողությունը կազմել է 80 վայրկյան Երևան քաղաքի Կոմիտասի – Գյուլբենկյան փողոցների խաչմերուկի հատվածում կանգառ է կատարել երթևեկելի մասի երկրորդ շարքում:

Ինչ վերաբերվում է ուղևոր իջեցնելու նպատակով 58 վայրկյան տևողությամբ կանգառ կատարելու համար դիմումատուի պնդմանը, ապա դա ոչ թե վարչական իրավախախտման տևողությունն է, այլ այդ փաստն արտացոլող տեսանյութի տևողությունն է, հետևաբար առկա չէ իրավական որևէ հիմք դիմումատուի կողմից կատարված իրավախախտումը նվազ նշանակություն ունեցող գնահատելու համար:

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի զանցակազմը, հետևաբար նրան վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

<u>Ո Ր Ո Շ Ե Ց Ի</u>

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 30.06.2021թ. թիվ 2112943732 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Գարեգին Հովհաննիսյանին:

Է.Կարապետյան

Կատարող՝ Ա.Մարգարյան
Հեռ. 060838402